№ 62 Յունիսի 20 Չորեքշաբթի 1884 Յունիսի 20 Չորեքշաբթի № 62

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ Բագուից։ Նամակ Շուշուց։ Նամակ Վերին — Ագուլիսից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Հայոց տիպեր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Յունիսի 5-ին

Երէկ երեկոյեան, ինչպէս արդէն հաղորդվեցաւ ձեզ հեռագրով, Օրդուբաթից հասաւ այստեղ Երևանի նահանգապետ գեներալ-մայոր պ. Շալիկով, ուղեկցութեամբ Նախիջևանի գաւառապետ պօղպօլկօվնիկ պ. Կուրչինի։ Պաշտօնական հիւրին արժանաւոր կերպով ընդունելու համար եղան կարևոր պատրաստութիւններ։ Այսօր, պ. նահանգապետը գաւառապետի, մի քանի այլ աստիճանաւորների, տանուտերի և ժողովրդեան բազմութեան ուղեկցութեամբ շրջագայեց գիւղը, անձամբ տեսնելու և չափելու հեղեղի տուած վնասները։ Դիակներից տասն և մէկը դեռ չէ գտնված։ Պ. Շալիկով շրջագայելիս հաւաքում էր կարևոր տեղեկութիւններ, և տեսնելով ամեն կողմից իր առաջը դուրս եկող բազմաթիւ՝ անտուն, անտէր, սիրելիներից զրկված վշտահար մարդոց, սփոփում և սիրտ էր տալիս նրանց, խոստանալով նրանց չուտափոյթ օգնութիւն։ Պէտք է ասել, որ այդ խրախուսանքները բաւականին սփոփիչ ներգործութիւն ունեցան խեղճ մարդոց վրա։ Անձամբ ականատես լինելով մեծամեծ վնասներին, նորին գերազանցութիւնը եռանդով խոստացաւ անել ամեն բան, ինչ որ իրանից է կախված. խոստացաւ հոգալ՝ կառավարութիւնից ամենավնասուածներին չուտափոյթ օգնութիւն հասցնելու, և յայտնելով՝ որ մեծ յոյս պէտք է ունենալ օտար տեղերում լինելիք հանգանակութիւնների վրա, աւելացրեց, որ ինքը ևս իր կողմից կաշխատէ աւելի լաւ յաջողեցնել հանգանակութեան գործը, եթէ ոչ ամբողջ տէրութեան մէջ, գոնէ Կովկասում։ Կարող անձանց ուշադրութիւնը հրաւիրեց այս բանի վրա, որ պէտք է առ ժամանակ սիրտ տալ աղքատացած թշուառներին, մինչև օգնութեան հասնելը, և ինքը իր կողմից նուիրեց մի նշանաւոր գումար՝ յօգուտ վնասուածների և զրկուածների։ Շնորհակալութիւն պ. նահանգապետին։ Վերջումը առանձնապէս առաջարկեց հասարակութեան հիմնել մի մասնաժողով, որ պարտաւորութիւն ունենայ հոգալու թշուառների ապահովութեան մեծ գործը։

Պէտք է ասեմ, որ երբ լրագրութեան միջոցաւ հրաւէր կարդացվեցաւ մարդասէր անձանց օգնելու Ագուլիսի վնասվածներին, այն օրից արդէն մասնաժողով հիմնելու միտքն էլ յղացաւ և կեանք առաւ։ Սակայն ինքն ըստ ինքեան պարզ պիտի լինի, որ մի այդպիսի մասնաժողովը իր գործը կատարած չի լինի՝ միմիայն նուէրները ստանալով և բաժանելով կարօտներին։ Ոչ։ Մասնաժողովի գործունէութեան ամենափայլուն կողմը այն կը լինի, որ նա զանազան ճանապարհներով, խնդրելով, դիմելով, հրաւէր կարդալով, աւելի մեծ չափով յառաջ կը տանէ հանգանակութեան գործը։ Այդպիսի հանգամանքներում, այդպիսի մի մարմին, պարզ է, որ շատ գործեր կունենայ կատարելու, սակայն այդ բոլորի մասին այստեղ խօսելը հարկաւոր չեմ համարում։ Երբ արդէն կը սկսվի մասնաժողովի կազմակերպութեան գործը, այստեղ, ժողովրդեան մէջ կարող կը լինեմ պարզել հարկաւոր կէտերը։ Հասկանալի է, որ դրա համար հարկաւոր կը լինեն գործի, եռանդի և հմտութեան տէր անձինք, այս արդէն ուստա Համբարձումների և Մղդեսի Մանասների տեղը և գործը չէ։—Այսօր, պ. նահանգապետի առաջարկութեամբ և պ. գաւառապետի ներկայութեամբ, Ագուլիսի և Նեղոտեանի ժողովրդեան երեսուն և երկու ընտրեալները կազմեցին մի ակտ, որտեղ ցոյց տալով երեսուն և մէկ ընտանիքների ամենաթշուառ դրութիւնը, հայցում են կառավարութիւնից իւրաքանչիւր ընտանիքին երկու հարիւր ռուբլու օգնութիւն։ Ցոյս պէտք է ունենալ, որ ժողովրդեան այդ սպասելիքը լիութիւն կը ստանայ։ Սպասենք։ Պ. Շալիկով առ հասարակ լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդեան վրա, որպիսի տպաւորութիւն առհասարակ այս կողմերում չեն թողնում փոքր աստիճանաւորները։ Այսօր երեկոյեան, պ. Նահանգապետը թողեց Ագուլիսը և գնաց պահելով ժողովրդեան մեծ յոյսերի մէջ, և տանելով իր հետ նոյն ժողովրդեան ջերմ յարգանքը և բարի ցանկութիւնները։—Այժմ, երբ արդէն սիրելիների կորստեան ծանր կսկիծը մասամբ թեթևացել է, երբ ժողովուրդը մասամբ ազատված է պառաւական երազների և անիծեալ երազագրերի ազդեցութիւնից, բազմաթիւ անձանց կեանքի սարսափելի ծանրութիւնը և անապահովութիւնը ակներև է։ Ամեն կողմից օգնութիւն են կանչում։ Թէ ինչ դիրք է բռնել Թիֆլիսի մամուլը գլխաւորապէս այս արկածի վերաբերութեամբ, ինձ յայտնի չէ մանրամասնաբար, որովհետև թերթերը դեռ չեն ստացվել, միայն այսքանը նորից հարկաւոր եմ համարում կրկնել, որ Ագուլիսը ամեն յոյսով սպասում է օտար տեղերի օգնութիւններին և մեծ ակնկալութիւն ունի լրագրութեան հրաւէրներից, այն Ագուլիսը, որ միշտ մասնակից է եղել շատ գեղեցիկ գործերում և որի չափազանցութեամբ հուչակված նիւթական ոյժերը անկարող են օգնութիւն անել։

Ամենայն կողմից լսվում է հետևեալ դիտողութիւնը՝ «Ագուլիսը այլ ևս չի ուզվի»։ Այդ խօսքը գուցէ որ հիմքեր ունի։ Բայց թող հեռու գնայ ժողովրդեան միջից յուսահատութեան զգացմունքը։ Հարկաւոր է բոլոր հասարակութեան ոյժերը միացնել։ Ժամանակն է, որ ամբողջ Ագուլիսը հոգայ իւրաքանչիւր ագուլեցու համար, իսկ իւրաքանչիւր ագուլեցին հոգայ ամբողջ Ագուլիսի համար։ Հեռացնել պէտք է մէջտեղից քսութերին. բամբասանքների ժամանակ չէ։ Ես միշտ մասնակից կանեմ այն անձանց, որոնք գոնէ կը ձգտեն օգտակար լինելու հասարակութեան շահերին, և առ այժմ չեմ կարող մատնանիշ չանել տանուտէր պ. Յովհաննէս Կոստանտինեանցին, որը չը նայած իրան հասած թէ ընտանեկան և թէ նիւթական վնասներին և կորստեան, գովելի եռանդով ծառայում է հասարակական շահերին՝ Ագուլիսի համար այս մռայլ և ծանր ժամանակը։ Ի դէպ. ասում եմ «այս ծանր և մռայլ ժամանակը», և այդ միանգամայն ճիշտ է։

Ահագին նիւթական վնասներին միացած բարոյական զրկանքները դեռ երկար ժամանակ մարդոց սրտերը կը ճնշեն։ Արդէն նախկին նամակում գրեցի «Մշակին», թէ ի միջի այլոց, որպիսի մատաղ հասակում գտանվող արժանաւոր աղջիկներից զրկվեցաւ Ագուլիսի ժողովուրդը։ «Արժանաւորի մահը մահուան զգացմունք է ապրողին».—շատ ճիշդ են բանաստեղծի այդ խօսքերը։ Եւ զարմանք չէ, որ այդ տպաւորութիւնը դեռ բուռն կերպով շարունակվում է։ Իբրև փաստ, այստեղ կը դնեմ հեղեղին զոհ գնացած տասն և եօթնեայ՝ օրիորդ Աստղիկ Շահնազարեանցի գրած ոտանաւորներից գէթ երկու տուն։ Ահա այն.

Եկէք ընկերուհիք, մինչ զգայուն ջահիլ ենք,
Ատելի տգիտութեան դէմ միշտ անհաշտ կրուվենք.
Միասին փչրենք փթած հին սովորութիւններ,
Որ թունաւորում են մեր կեանքի օրեր։

Ձեռք ձեռքի տուած, նպատակով ոգեորուած,
Հեռու յուսահատութիւն, դիմենք դէպ յառաջ.
Սիրենք միշտ լուսաւորութիւն ու ուսում,
Որ բոլորի համար նոր կեանք են բերում։

Հայ ընտանեկան կեանքի ծանրութեան տակ մնած, մեծացած, գաւառական հասարակական նեղ շրջանով կաշկանդված, դաստիարակութեան և զարգացման քաղցրութիւնները և հրաչալիքները դեռ նոր ճաշակած հայ աղջկայ այդ խօսքերը թանգագին են և սփոփիչ։ Անկեղծ սրտից դուրս ցատքող այս թնդիւնը՝ ընդդէմ տգիտութեան և վատութեան, աւելի արժանի են ուշադրութեան, քան արհեստական զգացմունքի տէր հայ շատ երիտասարդների՝ պարապութեան ժամերում հնարած և հրատարակած ոտանաւորների ամբողջ ժողովածուներ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՏԻՊԵՐ

—

Եթէ ամեն մի անհատի հետ, լինի նա մարդ թէ կին, երիտասարդ թէ աղջիկ, հարուստ թէ աղքատ, մի գործ կամ խօսակցութիւն ունենալիս, աշխատէք լաւ զննելով պարզ գաղափար կազմել նրա մասին և յետոյ բոլոր ձեզ ծանօթ անհատներին համեմատէք, դուք նրանց մէջ շատ նմանութիւններ կը գտնէք և շատ անգամ այն եզրակացութեան կը հասնէք, որ Մատթէոսը և Պօղոսը երկու մարմիններ լինելով պարունակում են իրանց մէջ մի և նոյն հոգին։ Բայց հետաքրքիրն այն է, որ բոլոր միմեանց նմանները գտնվում են և մի և նոյն հանգամանքների մէջ։ Օրինակ, ինձ երբէք չէ պատահել որ և իցէ մի նմանութիւն գտնել հարուստ հայի և մի աղքատ կօշկակարի մէջ։ Եթէ բոլոր միմեանց նմանների ընդհանուր յատկութիւնը ժողովելով մէկ մարդ ստեղծէք ձեր երևակայութեան մէջ և յիշեալ յատկութիւնը սեփականացնէք նրան, այդ երևակայական մարդը կը դառնայ մէկ տիպ։

Մենք կամենում ենք ընթերցողին ծանօթացնել մեզ՝ հայերիս մէջ գտնված զանազան տիպերի հետ։ Բայց հարկաւոր եմ համարում նկատել, որ եթէ օրինակ մենք նկարագրում ենք հայ կնոջ տիպը, այդ չէ նշանակում որ բոլոր հայ կանայքը այն տիպին են պատկանում, այլ եթէ բոլոր հայ կանայքը բաժանէք զանազան խմբերի վրա, վերջիններիս մէկի տիպն էլ մօտաւորապէս իմ նկարագրածը կը լինի։

—

ՀԱՐՈՒՍՏ ՀԱՅԻ ՏԻՊԸ

Նրա հասակը փոքր ինչ կարճ է և փորը ու պարանոցը հաստ։ Գլխին ունի մորթուց կարած սև փափախ, իսկ հագին շալ-աթլասի բաճկոնակ։ Մէջքին կապած ունի մետաքսեայ գօտի։ Նա դէմքով փոքր ինչ թուրքի է նմանում։ Նրա ճակատը լայն չէ, յօնքերը հաստ, քիթը մեծ, ածիլված թշերը ներս ընկած։ Ճանապարհ գնալիս անդադար դէպի աջ և դէպի ձախ է թեքվում և շատ հանդարտ է քայլերը փոխում։ Նա. միշտ բարձր ձայնով է խօսում, բայց համբերութեամբ։

Նա պարապում է վաճառականութեամբ կամ կալուածքներից ստացած քրէհով։ Առաւօտ բարևելիս նա «բարիլիս» է ասում, կէսօրին—«բարիչողում» (այսինքն բարի յաջողում), իսկ երեկոյեան—«բարիգիշն»։

Իր հաւատի մէջ հաստատ է և աստուածավախ։ Նա չէ սիրում, որ ուրիշները մեղք գործեն, բայց ինքը գործում է միշտ, մտածելով որ «Աստուած ողորմած է»։ Նա չէ սիրում նորութիւններ, բայց վերջիններին հետևող երիտասարդներում է, ասելով թէ «նա դեռ ջահիլ է»։ Մեր բարեկամը չէ սիրում երկար խօսակցել մէկ երիտասարդի հետ, բայց իր հասակակից կամ մի թուրք ծերունու հետ պատրաստ է առաւօտից մինչև երեկոյ «ըլտիլաթ» անել։ Որքան ծերանում է, այնքան փափագում է բարեգործութիւններ անելու, որպէս զի իր հոգին փրկվի, բայց որովհետև իր մանկութիւնից մինչև այժմ միայն առնելն է սովորել, ուստի չէ կարողանում կօպէկ դուրս բերել և մնում է տրադիկական դրութեան մէջ։

Երիտասարդ ընթերցող, այժմից սովորիր բարեգործութիւն անելու և ես այժմից ուիտում եմ սկսել։ Հա, այն էի ասում։

Մեր հարուստ բարեկամը շատ խաղաղասէր է, այսինքն կռուել չէ սիրում։ Նրա մօտ քո թշնամուդ ընդդիմացիր, նա քեզ կասէ. «ուզում ես հանգիստ ապրել, հանգիստ եղիր, հանգիստ լինես»։

Նա երբ տնից դուրս է գալիս՝ կամ շուկայ կը գնայ, կամ իր աղջկայ տեսութեան, և կամ վերջապէս քաղնիս, իսկ ուրիշի տուն կը գնայ միայն այն ժամանակ, երբ նրան հրաւիրեն։ Բաղնիս գնալիս նրան հետևում է Մաթոսը գոյնաւոր կապոցը կռնատակին, իսկ երբ շուկայ է գնում, ետևից գալիս է նոյն Մաթոսը զամբիւղը ձեռին խաղացնելով։

Երբ տուն է վերադառնում նրա հարսիկը խոկոյն փռում է պատի մօտ մի մինդար, և մի բարձ է դնում։ Պարոնը նստելով մինդարի վրա, իր մեծ փափախը կանդնեցնում է իր աջ կողմումը։ Նա իր կնոջը անուանում է «աղչի», որ նշանակում է «աղջիկ» (ինչ լաւ աղջիկ է)։

Նա կամ կարդալ չէ իմանում, կամ եթէ կարողանում է՝ բացի աւետարանից և սաղմոսից ուրիշ բան չէ կարդում։ Ուրիշ գրքերին և լրագիրներին դէմ չէ, բայց իր կերակուրը չէ համարում նրանց։

Նրա կարծիքով կապոյտ երկնակամարը ջրից է բաղկացած։ Երկրագունտի կոլորակ լինելը նրա ականջին հասել է, բայց նա հաւատալ չէ կարողանում, որովհետև, նրա կարծիքով, այն ժամանակ երկրի միւս երեսի մարդիքը պիտի ներքև թափվէին։

Մեր պարոնը քաղաքավարութիւնը հիմնում է հետևեալ նախադասութիւնների վրա. 1. «քեզանից մեծի մօտ միայն այն ժամանակ խօսիր, երբ քեզանից մի բան են հարցնում, 2. մինչև քեզ չը առաջարկեն նստել, կանգնած մնացիր, 3. հաց ուտելու ժամանակ այնքան սպասիր, որ քեզանից մեծերը ուտել սկսեն, 4. պատի մօտ կանգնելով ձեռքդ մէջքիդ մի դնիր, 5. աթոռի վրա նստած ժամանակ ոտդ ոտիդ վրա մի դնիր և այլն և այլն։

Նա խելօք է համարում այն երիտասարդին, որ վաճառական է և գիտէ խորամանկութիւններ բանեցնել, ըստ որում վերջիններս անհրաժեշտ են, նրա կարծիքով։

Նա երբէք ձի չի նստի, իսկ հրացանը տեսնել անգամ չէ կամենում։ Իր որդուն շորեր գնելու, սէյրը գնալու համար փող կը տայ, բայց հրացան կամ մի ուրիշ զէնք ձեռք բերելու համար չի տայ։

Եթէ նրանից փող պահանջես եկեղեցի շինելու, ուսումնարան կառուցանելու համար, թէև քիչ, բայց կը տայ, իսկ թատրոն շինելու համար չի տայ։ Աղքատին կօպէկով ողորմութիւն կանէ և միշտ համոզված է, որ աղքատը իր խելքի պակասութիւնից է աղքատ։

Նա իր ընկերի մօտ շատ անգամ գանգատվում է, որ աշխարհքը փչացել է, կեանքը դժուարացել է, ամեն բան թանգ է և սիրով յիշում է այն ժամանակը, երբ ալիւրի փութը 30 կօպէկ էր և ձուի երեքը 1 կօպէկ։

—

ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻ ԿՆՈՋ ՏԻՊԸ

Նա ժիր է լինում, նեղութիւններին համբերող, միշտ ուրախ, մաքրութիւն սիրող և աշխատաւոր։ Նա չէ ամաչում հարուստ մարդու կնոջից և մի տեսակ ատելութեամբ վերաբերվելով դէպի նա, տեղը եկած ժամանակ համարձակ պատասխաններ է տալիս նրան։ Նա ծաղրում է եւրօպական հագուստ հագնող կանանց և շատ էլ «ոաֆ» չէ համարում նրանց։

Նա սնահաւատ է. ականջիքոր գալը և աչքի թըռ-

զոլածուները։ Այս արդէն մի թանգագին ֆակտ է. թանգագին և քաղցրիկ։

Նամակս փոստան ղրկելիս լսեցի և յայտնում եմ, որ հեղեղից մեծամեծ վնասների է ենթարկվել և Մեղրի գիւղը։ Մայիսի 26-ին պատահել է հեղեղ, երկու կողմից. թէ գետն է յորդացել և թէ հեղեղ է եկել մօտակայ ձորից։ Մեծ վնաս է հասել բամբակի արտերին և այգիներին։ Վնասը մինչև քսան հազար ռուբլի։ Այդ թիւը անտանելի է Մեղրիի նման գիւղի համար։ Գիւղի ապրուստը բամբակից է. այդքան վնասվելը նոյն է, եթէ գիւղացիք մի տարի ամբողջապէս բամբակ չը վարեն։ Սա անտեսական պարզ հաշիւ է։ Բացատրել պէտք էլ չէ։ Հրաւիրում եմ ընթերցողաց ուշադրութիւնը գիւղի դրութեան վրա։ Ինչպէս պէտք է մեղրեցին հարկ տայ և իր պիտոյքները հոգայ։ Տեղեկութիւններ եմ ստանում, որ Զանգեզուրի դաշտի ուրիշ կողմերում էլ պատահել են հեղեղներ։ Այս ամիսները հեղեղի ամիսներ են։ Մանրամասնութիւնները յետոյ։

Խ. Մալումեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունիսի 6-ին

Մարդասիրական Ընկերութեան հայոց երկսեռ դպրոցների տարեկան հարցաքննութիւններն արդէն վերջացել են։ Քննութիւնները ցոյց տուին, որ բոլոր ուսուցիչները բարեխիղճ կերպով պարապած են և տարվայ ընթացքում համերաշխութեամբ տարել են գործը, որին, որպէս տեսուչ, ղեկավարն է պ. Ա. Գալստեանը։ Կարծում ենք, որ այժմ մեր դպրոցները ծառայում են ժողովրդի պահանջներին, երբ անցած տարիների նման չեն փոխվել ուսուցիչները, որի չարաչար վնասների հետքերը դեռ մինչև այժմս նկատվում են։ Ցուսով ենք, որ Ընկերութիւնն էլ այս հանգամանքը աչքի առնելով, այսուհետև աւելի ջանք գործ կը դնէ ժողովրդի յոյսերն իրագործելու նկատմամբ, որով ոչ պակաս հասարակութեան համակրանքը վայելած կը լինի, որը ինչ-ինչ պատճառներից վերջին տարիներումս պաղած է՝ Ընկերութեան ներքին խառն գործերի և մասնաւորապէս՝ նրա անդամների առ միմեանս ունեցած անմիջական յարաբերութեանց նկատմամբ,—որոնց վերաբերութեամբ յարմար ժամանակին մենք էլ մեր դիտողութիւնները կանենք։—Ձենք կարող անտարբերութեամբ անցնել, որ քննութիւններին թէ ժողովուրդը և թէ ընկերութեան անդամները փայլում էին իրանց բացակայութեամբ, բացի մի քանի երիտասարդներից և քահանաներից։ Ներկայ եղողները միշտ չնորհակալութիւն էին յայտնում թէ տեսչին թէ ուսուցիչներին։

Յունիսի 17-ին Մարդ. Ընկերութիւնը փառաւորապէս տօնեց իր 20-ամեայ տարեդարձը։ Սուրբ պատարագից յետոյ հիմնադիրների յիշատակին մաղթանք կատարվեցաւ, որից յետոյ և ամբողջ եկեղեցական դասը ժողովրդի խուռն բազմութեան ուղեկցութեամբ դիմեց Ընկ. դահլիճը, որը չքեղ և պատշաճաւոր զարդարած էր։ Դահլիճի ճակատին աչքի էր ընկնում ամենից առաջ Օգոստափառ Կայսեր Աղեքսանդր III-ի փառահեղ պատկերը։ Հանդէսը բացվեցաւ «Տէր պահեա զԿայսր» հիմնով։ Կարդացին ճառեր՝ պ. Գալստեանը, բացատրելով ընկերութեան գործունէութիւնը և հրաւիրելով ժողովրդի աջակցութիւնը ընկերութեան գործում։ Մի աշակերտ և աշակերտուհի,—միայն համառօտ կերպով երախտագիտական զգացմունք յայտնեցին։ Միջոցներին երգեցիկ խումբը պ. Ն Շահլամեանի կառավարութեամբ տօնին յարմար գեղեցիկ երգեր էր երգում։ Վերջում՝ տեղւոյս քարոզիչ հայր Ճերմակեանը մի երկար ատենաբանութիւն արեց։ Նա ինքնավստահաբար մերկացրեց հասարակութեան առջև ընկերութեան քահանայական անգործունէութիւնը, որով շատ վատ տպաւորութիւն գործեց։ Նա փոխանակ ընկերութեան լարված դրութեան վրա ցաւ յայտնելու, որպէս հայր, մասնաւորապէս և շօշափում է հին անդամների պատիւը, որոնց ժամանակ անհամեմատ փայլուն է եղել։ Մեր կարծիքով սա անհեռատեսութիւն է։—Երևի հայր Ճերմակեանը մոռացել էր իր անցած տարվայ խօսքերը ընկերութեան 19-դ տարեդարձի հանդիսին, որ գովում, փառաբանում էր ընկերութեան գործունէութիւնը։ Այս ինչ հակասութիւն է։ Վերջապէս ժողովուրդը մասամբ տխուր և մասամբ էլ ուրախ տրամադրութեան տակ ցրվեց։—Հանդիսի վերջում հանդիսականք հրաւիրվեցան աշակերտուհեաց ձեռագործները տեսնելու, բայց հայր-սուրբի մերկացումներից վշտացած՝ շատ քիչերը մօտեցան և հազիւ 60 ր. չափ փող գումարվեցաւ ինչ-ինչ ձեռագործների գնահատութեամբ ծախելուց։

Հանդիսատես

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 13-ին

«Արձագանք» շաբաթաթերթի № 21-ի մէջ կարդացինք, որ բազմաթիւ չնորհաւորական հեռագիրների շարքում, որ ուղարկված են Ներսէս պատրիարգին, նրա ընտրութեան առիթով, ուշադրութեան արժանի է Դերբենտից ուղարկած մի այսպիսի հեռագիր. «Հաճեցէք հեռագրաւ հրամայել արգելով քահանաների ձեռնադրութիւնը Էջմիածնի մէջ»։ Այս հեռագիրը, չը նայած իր տեսակի անտեղիութեան և ծիծաղելի բովանդակութեան, մի կողմից պէտք է համարել իբրև հետևանք այն դրութեան, որ այժմեան ժամանակ բռնել են զանազան տեղերում թեմական հոգևոր իշխանութիւնները քահանաների ձեռնադրութիւնների և եկեղեցական այլ գործերի վերաբերմամբ։ Գոնէ մի քանի անցքեր, որ տեղի են ունենում մեզ մօտ, ցոյց են տալիս, որ այդ հեռագիրը առանց յարգելի նպատակի չի եղել։ Յայտնի է, որ Էջմիածնի ս. Սինօդը հրամայել է քահանաներ չը ձեռնադրել մինչև Կաթողիկոսի ընտրութիւնը և Էջմիածին գալը։ Բայց և այդպէս այժմ տեղային կոնսիստորիայի շուրջը թափառում են շատ տիրացուներ, որոնք թափում են իրանց բոլոր ճիգը քահանայութեան հասնելու համար։ Տիրացուները ներկայացնում են բազմաստորագիր հանրագրեր գիւղային համայնքներից, որոնց մէջ ցոյց են տալիս ձեռնադրութեան անհրաժեշտութիւնը, պատճառ բերելով, որ գիւղերում քահանաներ բոլորովին չը կան, որ այլադաւանները աշխատում են օգուտ քաղել այդ հանգամանքից և հաստատվել գիւղերի մէջ՝ իրանց կրօնը տարածելու համար և այլ այսպիսի պատճառներ։ Լսում ենք, որ այդ հանրագրերի այժով կամենում են Էջմիածնում բան տեսնել ձեռնադրական գործերը կաթողիկոսի գալուց առաջ վերջացնելու համար։ Բայց մենք կարծում ենք, որ այդպիսի ձեռնադրութիւնները ոտնակոխ են անում կաթողիկոսի բարձր իրաւունքները և կըրկին դայթակղութեան քարեր են կարող դառնալ ամբոխի աչքում։ Այս հանգամանքների առաջ չէ կարելի յարգել և այն պատճառները, որոնց վրա տիրացուները հաստատում են իրանց ձեռնադրութիւնների անհրաժեշտութիւնը։ Նախ՝ քահանաների սակաւութիւնը գիւղերում եթէ կարող է վնաս բերել՝ դա միայն ներկայ սուղ միջոցում չէ երևիզալի, այլ համարեա միշտ այդպէս եղել է. իսկ եթէ տեղական հոգևոր կառավարութիւնը կամենում է լցնել այդ պակասը հէնց այժմ, կարող է ժամանակաւոր քահանաներ ուղարկել այդպիսի տեղերը այն գիւղերից, ուր շատ քահանաներ կան։ Երկրորդ՝ չենք կարծում, որ այլադաւանները կարողանային հէնց այս կարճ միջոցում, մինչև կաթողիկոսի Էջմիածին ժամանելը, այնպիսի հեշտութեամբ գործադրել իրանց նպատակները, մանաւանդ, որ նրանց հետ մաքառել բոլորովին անկարող կը լինեն նորընծայ քահանաները, որոնք համարեա գլխովին ոչ թէ որ և է գիտութիւն ունեն կրօնի մասին, այլ իսկապէս անգրագէտ են, բառի բուն նշանակութեամբ։ Աւելի հաւանական ենք համարում ենթադրել, որ ձեռնադրութեան գործերի այսպիսի հապճեպով առաջ մղելու պատճառը նոյն իսկ տիրացուների կատարեալ տգիտութիւնն է, և հանգամանքից օգուտ քաղելը միայն կարող է նպատակը իրագործել։ Ի հարկէ հեշտութեամբ կարելի է դուշակել, որ այս դէպքում Նա հաստատ դաղափար չունի ոչ մի բանի վրա. նա ոչ հաստատ կրօնական է և ոչ հաստատ անկրօն, այլ անդադար ժամացոյցի սլաքի նման տատանվում է։ Նա խօսում է խառն հայռուսական լեզուով, բայց ոչ ռուսերէնն է լաւ իմանում, ոչ հայերէնը։

Նրա էստէտիկական զգացմունքները թմրած են. նա տրագեդիան չէ սիրում, բայց կոմեդեան էլ շատ լաւը պիտի լինի, որ նրան փոքր ինչ զուարճացնէ, որովհետև ինքը հէնց մէկ կատարեալ կոմէդիա է։ Ամուսնանալու վրա նա երբէք չէ մտածում, բայց միւս կողմից բնութեան ձեռքին յաղթվելով, մի տեսակ ճնշողութիւն է զգում իր վրա և փոքր առ փոքր սկսում է կեանքը ատել։

Նրան եթէ մէկ ստորագրութեան թերթ մատեցնես, կը ստորագրի, բայց այն էլ քեզ չը կատրելու համար։ Նա ոչինչ իդէալ չունի, և ինքն էլ չը գիտէ, թէ ինչու համար է ապրում։

Այդպիսիները շատ անգամ պարապում են գրագրութեամբ և կամ զանազան չնչին պաշտօններ են վարում։

Մի ուրիշ տեսակը։

Նա փոքր ի շատէ սիրում է հայերին և պարծենում է նրանցով։ Նա կամենում է գործել ազգի համար և եթէ նրան յաջողվում է մի ամենաչնչին դեր խաղալ հասարակական ասպարիզում, իրան երջանիկ է համարում։ Այդպիսիները կազմում են այն խումբը, որին պատրաստել է մեր նոր դրականութիւնը։ Նա բաւական ծանօթ է հայոց նոր դրականութեան հետ և անպատճառ պատկանում է որ և իցէ մի կուսակցութեան։ Ցաւալի է, որ այդպիսիները ամեն մի բանի մէջ կուսակցական ոգով են գործում. երբ մշակականը առաջարկում է մի կիրակնօրեայ դպրոց բացել, մեղուականը չէ համաձայնվում. իսկ երբ մեղուականն է առաջարկում, մշակականը չէ համակրում և այդպիսով, շատ գործերի վնասում են։ Ես մի այնպիսի մշակական եմ, որ եթէ ինքը պ. Գրիգոր Արծրունին մեղուական դառնայ, դարձեալ ես մշակական կը մնամ, բայց և այնպէս տասն անգամ աւելի պատում եմ այն մեղուականին, որը օգնում է սիրողների խումբին, երբ նրանք կամենում են ներկայացում տալ, քան թէ այն մշակականին, որը ոչինչ չէ գործում։ Դառնանք դէպի մեր հերոսը։

Նա օտար լեզուների հետ շատ ծանօթ չէ և քիչ է կարդացել օտար գրքեր, բայց հայոց լրագիր կարդալը նրա համար պահանջ է դառել, այնպէս որ բաղնօսչիկին տեսնելիս նրա սիրտը թրռթռում է։

Նա այնքան մաքուր ձեռքեր, լաւ սանրած մազեր չունի, որպէս վերոյիշեալը, իսկ իր եղունգները շատ անգամ մոռանում է կտրատել, որովհետև նրա սիրտն էլ, միտքն էլ զբաղված են։

Նաղարեանցին և սրա նմաններին նա սուրբերի տեղ է ընդունում և միշտ պարծենում է նրանցով։

Նա սիրում է վիճաբանելը և ամեն մի իսօսակցութեան մէջ, աշխատում է հասարակական հարց մոցնել. մասնաւոր խօսակցութիւնը նրան շատ դուր չէ գալիս։

Ես խոստանում եմ ծանօթացնել ընթերցողին հետզհետէ և հայոց ուրիշ տիպերի հետ։

Ս. Թառայեանց

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Ցունիսի 10-ին

Այսօր, ամսոյս 10-ին կայացաւ մասնաժողովի անդամների ընտրութիւնը։ Իմ նախկին նամակներից «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի պիտի լինի, թէ ինչ հիմունքներով և նպատակով է կազմակերպվում այդ մասնաժողովը, որի նպատակը պիտի լինի օգնելու հեղեղից վնասված թշուառներին, ուրեմն, որը ստանձնում է մի ծանրակշիռ գործ։ Արդէն ակնարկել եմ և այն կէտի վրա, որ այդ մասնաժողովը ուրիշ շատ գործեր ունի անելու, որը կարելի կը լինի պարզաբանել անմիջապէս, հէնց այստեղ, Ադուլիսում։ Որովհետև բազմաթիւ անհաց և անտուն մնացածների հետ միասին լիայոյս և համոզուած եմ, որ արդէն շատ շատերի ցանկութիւնն է նիւթականապէս օգնական լինելու թշուառներին, ուստի շտապում եմ յայտնելու «Մշակի» միջոցաւ՝ թէ ինչպէս և ո՞ւմ պիտի ուղարկվեն նպաստները։

—Մասնաժողովի անդամները են՝ պ. պ. Խաչատուր Փանոսեանց, Քրիստափոր Միքայէլեանց, Առաքել Ներսէսեանց և Աւետիս Մնացականեանց։ Նախագահ ընտրվեցաւ գերապատիւ Գրիգոր եպիսկ. Աղափիրեանց։ Փողերը պէտք է ուղարկել հետևեալ հասցէով՝ Предсѣдателю комитета для вспомощ. потерп, отъ наводн., Его преосвященству Григорію Агапиріанцъ. Ժամանակս ներածին պէս՝ կը խօսեմ մասնաժողովի ընտրութեան ժամանակ ստացած լաւ և վատ տպաւորութիւնների մասին, նորից ակնարկելու այն հայեցակէտերի վրա, որոնցով մեր մէջ լինում են հասարակական պաշտօնների համար ընտրութիւններ, որի մասին մի ուրիշ ժամանակ «Մշակի» մէջ մանրամասն խօսել եմ արդէն։ Իր ժամանակին պարբերաբար «Մշակի» միջոցաւ մասնաժողովի գործունէութեան և ստացած նպաստների մանրամասն հաշիւը կը ներկայացնեմ։

Խ. Մալումեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Ցունիսի 15-ին

Անցեալ Մայիսի 21-ին հայ դերասանական խումբը՝ կարգադրութեամբ պ. Գ. Զմշկեանի, տուեց թատրոնական մի ներկայացումն, որի արդիւնքի կէսը յատկացրած էր Հալաբարի Ս. Մարիամեան հայ օրիորդական ուսումնարանին։

Այս ներկայացման ընդհանուր մուտքն էր..... 584 ր. 80 կ.

Թատրոնի վարձ և ուրիշ մանր ծախքեր..... 218 ր. 4 կ.

Զուտ արդիւնք՝..... 366 ր. 76 կ.

Որից մինչև այժմ մնում է ապառիկ զանազան անձանց վրա..... 24 ր. 50 կ.

Առձեռն պատրաստ գումարի կէսը, այն է 171 ր. 13 կ. յանձնվեցաւ պ. Զմշկեանի ձեռքով դերասանական խմբին և նոյնքան էլ պատկանում է ուսումնարանին։

Բացի այս՝ յիշեալ ներկայացման առիթով յոգուտ ուսումնարանի ստացվեցաւ նպաստ հետևեալ անձինքներից՝ տ. տ. Ս. Թամամշեանից 2 ր., Կ. Խալաթեանից 2 ր., Շ. Ծուրինեանից 10 ր., պ. պ. Քաղաքագլուխ Ա. Մատինեանից 5 ր., Դ. Հախնազարեանից 1 ր., Մ. Շահ-Պարոնեանից 3 ր., Ա. Մանդինեանից 3 ր., Մ. Սալամբէգեանից 8 ր., Տ. Նազարեանից 2 ր., Իշխան Ն. Արղութեանից 1 ր. և պ. Սիմէոնեանցից 1 ր. ընդ ամենը 38 ր., որ վերոյիշեալ 171 ր. 13 կ. հետ անում է 209 ր. 13 կ. որ և լիովին ներկայացրած է ուսումնարանի վարչութեանը հանդերձ ապառիկների ցուցակով։

Հրատարակելով այս հաշիւը, քաղցր պարտք եմ համարում յայտնել իմ խորին շնորհակալութիւնը թէ դերասանական խմբին և թէ յատկապէս պ. Ա. Մանդինեանին, որ մասնակցեց խաղին առանց որ և է ակնկալութեան։

Ուսումնարանի խնամակալ՝ Գաբրիէլ Սունդուկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը. «Ամսոյս 10-ին կատարվեցաւ ս. Գայիանեան հայ օրիորդաց դպրոցի ակտը։ Ցեսչուհի օր. Գ. Յովհաննիսեանը կարդաց մի ուսումնական հաշիւ, որի վերջանալուց յետոյ սրբազան Սուրէնեանը հանդիսին յարմար համառօտ և գեղեցիկ ճառ խօսեց։ Կատարեալ պիտի լինէր աղդեցութիւնը, եթէ սրբազանը վերջում դպրոցի տնտեսական աննախանձելի դրութիւնը միմիայն չը վերագրէր Երևանի հայ հասարակութեան անտարբերութեանը։ Միթէ հասարակութիւնն է մեղաւոր, երբ ուսումնարանի հոգաբարձութիւնը հոգ չէ տանում ժողովելու ապառիկները, հոգ չէ տանում դլուխ բերելու վիճակախաղը, երբ հրամանը ստացված է վաղուց. այս վիճակում նրա ուսուցիչները ի հարկէ որ չեն կարող ստանալ անցած ապրիլ և մայիս ամսվայ ռոճիկները։ Բայց ոչ, արդար է սրբազանը, իրաւացի նրա տրտունջը. հասարակութիւնը յանցաւոր է, որովհետև նա ինքն էր ընտրողը, նա ինքն յանձնեց դպրոցը այդ հոգաբարձութեան։»

—

«Новое Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, որ այս տարի Թիֆլիսի Բէալական ուսումնարանի լրացուցիչ բաժնում աւարտեցին իրանց ուսումը և վկայականներ ստացան 19 հոգի, որոնցից 12 հայեր են, 5 ռուս, 1 թուշ և 1 հրէայ։ Վեց-դասարանոց բէալական ուսումնարանների ատեստատ ստացան 35 մարդ, որոնցից 17 հայեր են, 12 ռուս, 3 վրացի, 1 թուշ և 1 թուրք։

—

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի Մեծ իշխանուհի Օլգա Ֆեոդորովնայի իգական գիմնազիայում ներկայ տարին աւարտեցին իրանց լիակատար ուսումը 35 աշակերտուհիներ. նրանցից 3 վրացիք են, 2 հայ, իսկ մնացածները ռուսներ են։

—

«Каспій» լրագիրը ասում է. «Վերջին ժամանակ գաւառներից բարեյաջող լուրեր են հասնում, որոնք ստիպում են մեզ յուսալ, որ եթէ կատարելապէս չի ոչնչանայ դաչաղութիւնը (դա պայմանաւորված է խիստ բազմակողմանի և բարդ պատճառներով), գոնէ չի էլ զարգանայ։ Այս օրերը Լէնքօրանից հեռագրով մեզ հաղորդում են, որ ընտել են չորս աւազակներին, որոնց թւում և տաժանակիր աշխատանքներին դատապարտված Եյնուլին։ Այժմ մենք աւելի ևս նշանաւոր տեղեկութիւն ստացանք։ Ջէվատի գաւառի Սուրբա գիւղում սպանել են յայտնի աւազակապետ Քէրբալայ-Ալի-Ցուսէյնին և էլի սրա հետ միասին գտնվող մի աւազակին»։

—

«Դրօէբա» լրագիրը հաղորդում է, որ վրաց թատրոնասէրներից մէկը դիտաւորութիւն ունի մի խումբ կազմել և առհասարակ վրաց թատրոնական գործերի ղեկավար լինել եկող սեպտեմբեր ամսից։ Այդ նպատակով նա մտադիր է բանակցութիւններ սկսել «Վրաց դրամատիկական ընկերութեան» հետ։

—

«Одесскій Листокъ» թերթը հաղորդում է, որ մայիսի 31-ին Օդէսայի Առևտրական հիւրանոցում ապրող ալէքսանդրօպոլցի Կարապետ Ռնժիէվից գողացան 400 ր., նրա դոկումէնտը և զանազան առարկաներ։ Ռնժիէվը գողութեան մէջ կասկածեց իր բարեկամ Ջալալօղլեցի Ստեփան Շահպարունովին, որը բնակվում էր Սակսնիա անունով հիւրանոցում և յաճախ նրան աֆցելում էր։ Գողութեան օրը Շահպարունովը Ղրիմի չոգենաւով ճանապարհ ընկաւ դէպի Կովկաս և նրան բռնելու համար հաղորդված է Սեվաստօպոլի, Կերչի և Բաթումի պոլիցիաներին։

—

Ս. Պետերբուրգից «Neue Freie Presse» լրագրին հաղորդում են, որ Ռուսաստանում հրէաների դրութեան վերաբերեալ խնդիրը մշակող յանձնաժողովը վերջացրեց իր սկզբնական աշխատանքները և հաւաքեց պատմա-իրաւաբանական բոլոր անհրաժեշտ նիւթը։ Յանձնաժողովի մեծամասնութիւնը անհրաժեշտ է համարում աւելի մարդասէր և ազատամիտ ուղղութիւն ունեցող օրէնսդրական ըէֆորմներ։

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ ապահարզանի հարցը շուտով կը քննվի օրէնսդրական կարգով։ Մտադրութիւն կայ ապահարզան տալ նրանց, որոնք հինգ տարվայ ընթացքում առանձին են ապրել։

—

Թիֆլիսի երկրորդ գիմնազիայում աւարտել և հասունութեան վկայական են ստացել հետևեալ հայ աշակերտները. — Աղէքսանդր Աբուլեանց, Թիֆլիսեցի, Եփրեմ Աղամալով, շուշեցի, Յովհաննէս Ամիրխանեանց գանձակեցի, Վաղարշակ Ադամով, Թիֆլիսեցի, Աբայ-Գևորգիկ Եպիսկոպոսեանց, Գանձակի Նահանգի Բանանդ գիւղից, Գրիգոր Ղորգանով, երևանցի, Գէորգ Պապուլով, Երևանի Նահանգի Քանաքեռ գիւղից, Սիմոն Բաղալով, գանձակեցի, Նիկողայոս Սարգիսեանց, սղնախեցի, Կարապետ Տէր-Մարուքով, երևանցի, Յովհաննէս Աւետիսով, Թիֆլիսեցի։ Որպէս «Кавказъ» լրագիրը հաղորդում է ուսումն աւարտած բոլոր երիտասարդ մարդիքը ցանկութիւն յայտնեցին մտնել ռուսաց համալսարանների զանազան ֆակուլտէտները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վերջին ժամանակներս լուրեր էին տարածվել սպանիական թագաւորի վատառողջութեան մասին։ Ըստ երևոյթին, հաւատի աղբիւրների հիման վրա պնդում էին, թէ թագաւորի մէջ երևացին բարակացաւի անկասկածելի նշաններ։ Ողբան ճիշդ են այդ լուրերը, յայտնի չէ, բայց «Berliner Boersen-Courier» լրագիրը հանդէս է բերում, որպէս հերքումն, այն հանդամանքը, որ թագաւորը դեռ նորերումս շատ նշանաւոր գումարով ապահովեցրեց իր կեանքը։ Ինքն իրան հասկանալի է, որ կեանքը ապահովեցնելուց առաջ, թագաւորին բժիշկները մանրամասն և ճիշդ կերպով հետազօտեցին և ոչինչ կասկածաւոր բան չը գտան նրա առողջութեան մէջ, հակառակ դէպքում, ապահովող ընկերութիւնները չէին վստահանայ այդպիսի ահագին գումարով ապահովել սպանիական թագաւորի կեանքը։ Ապահովական գումարը մօտ 500,000 ֆրանկ է, որը, թագաւորի մահուան դէպքում (որը այժմ 25 տարեկան է) պէտք է վճարվի նրա ընտանիքին կամ իրան, երբ ինքն 46 տարեկան կը դառնայ։ Թագաւորը իւրաքանչիւր տարի վճարում է 23,000 ֆրանկ պրէմիա։ Բարակացաւի նման ժառանգական որ և է հիւանդութեան նշաններ բժիշկները, ինչպէս երևում է, չեն գտել, թէ չէ պրէմիայի գինը կը բարձրացնէին, կամ չէին ապահովի թագաւորի կեանքը։

—Մայրաքաղաքի լրագիրներին հեռագրով Բերլինից հաղորդում են, որ յունիսի 7-ին Բերլինում վախճանվեցաւ դերմանացի պատմաբան Դրէյզէնը։ Հանգուցեալ պատմաբանը ծնվել է 1808 թվին Տրէյտաուի մէջ, Պոմէրանիայում, և 1835 թվին գրաւեց Բերլինի համալսարանի ամբիոնը. ապա նա պրոֆէսոր էր և դասախօսութիւններ էր կարդում Կիլի, Ինենի և 1859 թվից կրկին Բերլինի համալսարաններում։ Նրա ամենագլխաւոր հեղինակութիւններն են՝ «Ալէքսանդր Մեծի պատմութիւնը», «Հելլենականութեան պատմութիւնը», «Ազատութեան համար պատերազմի պատմութեան դասախօսութիւններ», «Մարաշխատ կոմս Եօրկ Վարտենբուրգի կենսագրութիւնը», «Պատմութիւն Դանիայի քաղաքականութեան» և «Պատմութիւն Պրուսիայի քաղաքականութեան» (տասը հատոր)։ Բացի դրանից. նա յայտնի է որպէս Էսքիլէսի և Արիստոֆանի թարգմանիչ։ Դրէյզէնը իր հայրենիքի քաղաքական կեանքին մասնակցում էր միայն 1848 թվին, Ֆրանկֆուրտի սարլամէնտի անդամ էր և սահմանադրական յանձնաժողովի քարտուղար։

—Լրագիրներին հեռագրով հաղորդեցին Նիդերլանդիայի թագաժառանգ իշխան Ալէքսանդր Օրանիանի մահը։ Հանգուցեալ իշխանը, որպէս յայտնի է, Վիլհելմ III-դ թագաւորի և իշխանուհի Սօֆիայի երկրորդ որդին է. մի և նոյն ժամանակ հանգուցեալը մօտիկ ազգականութիւն ունէր ռուսաց կայսերական տան հետ. նրա մեծ մայրը մեծ իշխանուհի Աննա Պաւլօվնան էր։ Թագաժառանգ իշխան Ալէքսանդրը ծնվեցաւ 1851 թվին և ծովապետ էր Նիդերլանդիայում, իսկ իր աւագ եղբօր, իշխան Վիլհելմ-Նիկոլայ-Ալէքսանդրի մահից յետոյ նա թագաժառանգ դարձաւ։ Ներկայումս Նիդերլանդիայի թագաժառանգուհի է դառնում թագաւորի միակ դուստր Վիլհելմինան։ Այդպիսով, ներկայ բօպէում, չէ կարող թագաժառանգութեան մասին մի որ և է հարց ծագել, և ֆրանսիական ու անգլիական լրագրներում այդ խնդրի վերաբերութեամբ յարուցված աղաղակը, յամենայն դէպս, վաղաժամանակեայ է, թէպէտ և աչքի առաջ ունենալով վախճանվածի թագաւորի ծանր հիւանդութիւնը և նրա փոքրիկ ժառանգուհու թոյլ առողջութիւնը կարող է մօտիկ ապագայում նիդերլանդեան թագի թագաւորի մօտիկ ազգականներին անցնելու խնդիրը ծագել։ Մօտիկ ազգականներն են՝ թագաւորի քոյր Սօֆիան, որը Սակսէն-Վէյմարի դքսի կինն է, և թագաւորի մօրաքրոջ որդի Պրուսիայի իշխան Ալբերտ։ Նիդերլանդիայի բնակիչները այնպէս են վախենում այսպէս կամ այնպէս ընկնել գերմանական կայսրութեան իշխանութեան տակ, որ մինիստրութիւնը արդէն նախագիծ կազմեց սահմանադրութիւնը փոփոխելու մասին։ Այդ նախագծի հիման վրա որոշված է, որ Օրանեան տան արական շառաւիղը ջնջվելուց յետոյ, թագը անցնում է կանանց շառաւիղին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ցայտնի է, թէ որքան տարօրինակ երևոյթներ է ծնեցնում կրօնական կեանքը Ամերիկայում։ Դժուար է երևակայել, գրում են «Schweizer Ppotestantenblatt» թերթին, մի աւելի անմիտ բան, քան այն նոր աղանդը, որ նորերումս տարածվել է Նոր-Մէքսիկայում և որը ակամայ յիշեցնում է մեզ միջնադարեան խարազանի հարուածներին ենթարկվողներին։ Այդ աղանդի անդամները ամենամեծ երջանկութիւն են համարում ենթարկել իրանց ամենանուրբ տանջանքներին և չարչարանքներին։ Այսպէս, օրինակ, նրանք տարաբրիկ եկեղեցի են մտնում, նախապէս ոտի տակը դնելով մի սրածայր առարկայ կամ հնդկաթզենու փուշը։ Մի քանիսները մերկ ուսերի վրա կրում են մեծ ծանր խաչը մինչև որ բոլորովին ուժաթափ ընկնում են գետնի վրա, կամ թէ իրանց մարմնի ամենաքնքոյշ մասերը հարուածում են ճիպոտներով կամ չուաններով։ Այդ բոլոր տանջանքները նրանք յօժարակամ յանձն են առնում որպէս պատիժ իրանց մեղքերի։ Վերջին ժամանակ, մինչև անդամ այսպիսի դէպք կար. Ռիո-Ալրիսում այդ ապաշխարող ջերմեռանդ մեղաւորներից մէկը երկաթի մի ծանր կտոր վզից կախեց և նրա հետ գետն ընկաւ, ուր և խեղդվեց հիացմունքի բարձր աղաղակներով։ Ցաստում աղանդի մէկ անդամը խնդրում էր իր բարեկամներից խաչել իրան, և բարեկամները չտապեցին կատարել նրա ցանկութիւնը։ Իրաւ է, նրանք այդ բանի համար դատի ենթարկվեցան, բայց երդուեալ դատաւորները արդարացրին նրանց։ Իսկ երբ մի քանի կաթոլիկները, գրգռված այդ սարսափելի տեսարաններից, գանգատներով դիմեցին կառավարութեանը, այն ժամանակ վերջինս պատասխանեց, որ եկեղեցին պետութիւնից անջատելու սկզբունքը թոյլ չէ տալիս նրան խառնվել այդ գործերում և որ այդ չարիքի առաջն առնել կարող է հասարակական կարծիքը։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աբբունական Նիկոլաեվսկի ուսումնարանի համար հարկաւոր է բակով տուն հինսենեակից բաղկացած, որոնցից հինգը պէտք է լինեն մեծ—դասատուների համար—հետևեալ տեղերում։ Ոսկերիչխանից սկսած մինչև „Խլէբնայա“ անուանված հրապարակը կամ նորանց մօտակայ թաղերում։ Պայմանների մասին կարող են ցանկացողները դիմել ուսումնարանի տեսուչ Պօղոս Քաթանեանցին մինչև յուլիսի մէկը Հալաբարում, Լազարեւսկի փողոցի վրա, Քալանթարեանցի տներում, ամենայն օր, 7 ժամից մինչև 10 առաւօտները և 5 ժամից մինչև 7 երեկոները։

1—3

ԲՕՄԱԶԷՑ! ԲՕՄԱԶԷՑ!! ԲՕՄԱԶԷՑ!!!

Գործարանական գներով Անգլիական մագազինում, Արծրունու Գալերէյում։ Նոյն տեղը ուրիշ տեղերից 30% էժան են ծախվում՝ ծալվող աթոռներ, սեղաններ և մահճակալներ, կլէօնկա, դուլպաներ և զանկապաններ, բիսկվիտներ, կակաօ և շոկոլադ. պօրտ-սիգարներ, փողի քիսաներ. խոզանակներ զանազան տեսակ, հրացաններ, ատրճանակներ և թամբեր. թիեր, ակնատներ և բահեր։ Թէյ առաջին հունձի և այլն։

1—10

ԷԺԱՆ ԾԱԽՎՈՒՄ Է

Կահկարասիք և ամաններ, Արսենալնայա փողոց, № 24, երկրորդ յարկ։

1—2

Ներսեսեան Դպրանոցի բարձր դասատան աշակերտ քաղաքում ամառս ընդունում է պատրաստել աշակերտներ, ձեռնտու պայմաններով։ Հարցնել խմբագրատանը։

1—5

Ներսէսեան Հայոց Ազգային Հոգևոր դպրանոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ, ցունիս ամսոյս 20-ին երեկոյեան 8 ժամին կը լինի աճուրդ (առանց կրկնաճուրդի) կապալով տալու նոյն դպրանոցի կալուածքը տուն և կրպակներ, ընծայած հանգուցեալ Աւետիք Փիրոյեանցից, որ գտանվում են Սօլդատսկի անուան փողոցում, №№ 6 և 11։

Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր (բացի կիւրակէին և տօներից), ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամն։

2—2

ՐԱՖՖԻ

„ՋԱԼԱԼԷԴԻՆ“

տպված է հեղինակի պատկերով

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼ

Թիֆլիսում վաճառվում է

Հեղինակի մօտ,—„կենտրօնական գրավաճառանոցում“,—Կովկասեան գրավաճառանոցում,—Շահվերդեանի պավիլիօնում,—Շահինեանցի և Տէր-Յովսէփեանցի ծբխախոտի մագազիններում։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեղինակին այդ հասցէով.

Тифлисъ. Редакція „Мшакъ“.

13—20

Մի օտարական հաց երիտասարդ, որ գիտէ անգլիերէն, ֆրանսերէն, իտալերէն և յունարէն լեզուները, շատ ձեռնտու պայմաններով կամենալով դասեր ունենալ, պատրաստ է նաև ամբարանոց գնալ։

Հասցէն Դվորցովի փողոցում, Դալլերէա Արծրունի, № 181։

ՐԱՖՖԻ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԽԱՉԱԳՈՂԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

(III և IV *մաս*)

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 ԿՕՊ.

Վաճառվում է՝ „Մշակի“ խմբագրատանը,—„կենտրօնական գրավաճառանոցում“,—„Կովկասեան գրավաճառանոցում“,—Պ. Շահվերդեանի պավիլիօնում։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեղինակին այդ հասցէով.

Тифлисъ. Редакція „Мшакъ“.

3—30

Կարող է պատրաստել միջնակարգ ուսումնարանների ամեն դասատան համար։ Հասցէն „Մշակի“ խմբագրատանը։

3—3

ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՎՕՐՕՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

Հիւանդները ամեն օր ընդունվում են.

Առաւօտեան՝ 9—$12^1/_2$ *ժամ,* ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—*վիրաբուժական, վեներական և ատամի ցաւերի։*

10—$10^1/_2$ *ժ.* ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—*մանկական և ներքին ցաւերի։*

$10^1/_2$—$12^1/_2$ *ժ.* ԿԻՆ—*բժիշկ* ՇՄԻՏՑ—*կանանց, ներքին և աչքի ցաւերի։*

10—11 *ժ.* (*կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ*) ՐԷՑԽ—*աչքացաւի։*

$11^1/_2$—$12^1/_2$ *ժ.* (*երկուշաբթի*), ԲԱԲԱՑԵԱՆ—*ներքին և ջղային ցաւերի։*

Երեկոյեան՝ $5^1/_2$—$6^1/_2$ *ժ.*—ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—*ամեն օր։*

ԲԱԲԱՑԵԱՆ *և* ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—*չորեքշաբթի և շաբաթ։*

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—$6^1/_2$—$7^1/_2$ *ժամը երեկոյեան։*

Հիւանդանոցը ունի սենեակներ հիւանդների և ծննդկանների համար։ Երթևեկ-հիւանդները վճարում են խորհդի համար 50 *կ.։ Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կօնսիլիում) համար* 3 *մանէթ։ Զ.քաւորները անվճար։*

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Սանդալի „Վիշապ“ Տաճկահայ պանդուխտ մշակների կեանքից պատկերը։ Հրատարակութիւն Սարգիսբէկեանի. գինն է 40 *կօպ.։*

Յանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցէով.

Тифлисъ, Головинскій проспектъ, домъ Ананова кв. 30 Софія Петросянъ.

ԹԷՅ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ *այս տարի չափազանց* **ԳՈՅՆԱՒՈՐ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ**։ *Այդ թէյից ստացված է* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ* 50,000 **ՖՈՒՆՏ** *և ծախվում է* 25% *էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ* ԿՕՆԳՕ *թէյ* 1 *ր.* 10 *կ. մինչև* 1 *ր.* 2 *կ., շատ լաւ* ԿՕՆՖԱ *թէյ* 1 *ր.* 40 *կ., գերազանց* ՄՕՆԻՆԳ *թէյ* 1 *ր.* 60 *կ. (այս թէյը ամեն տեղ ծախվում է* 2 *ր. և* 2 *ր.* 50 *կ.),* ԿԱՍԱՈՒ *թէյ* 1 *ր.* 80 *կ. և ամենալաւ* ՖՈՒ-ՉԷ-ՖՈՒ *թէյ* 2 *ր. ֆունտը քարշը առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում է* 500 ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 *ր.—*60 *ր.։* ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ *մագերի համար։ Երկաթէ* ԳՐԻՁՆԵՐ *ամբողջ Կովկասի համար, շօկոլադ* ՖՐԱՑ, *շէֆիլդի* ԴԱՆԱԿՆԵՐ, *հրացաններ* ԴԱՈՒ, *րեվոլվերներ* ՎԷԲԼԻ, ԲԱՐՆԷԲԻԻ *թամբեր,* ՇՎԱՐՑԻ *ալբօմներ։*

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԸ *գտնվում է Թիֆլիսի մէջ, Դվորցովի փողոցի վրա Արծրունու դալլերէում №№* 156 57, 158, 159, 160։ *Նոյն տեղը մեծ քանակութեամբ* ԵՐԵԽԱՆԵՐԻ *և տղամարդկանց մահճակալներ* 25% *էժան քան թէ ուրիշ տեղ* 10% *էլ զիջումն։* 35—100

Պ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ, *Թիֆլիսում, ընդունվում է Կ. Պոլսի* **„ԱՐԵՒԵԼՔ“** *լրագրի բաժանորդագրութիւնը։ “Արևելք“ լրագրի բաժանորդագինն է՝ տարեկան . . . . . 20 ր.*

Վեց ամսվանը . . . . . 10 ր.

Հատով ծախվում է . . . . . 10 կ.

Բաժանորդագրութիւնը ընդունվում է ամեն ամսի 1-*ին և* 15-*ին։*

6—20

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ են և շուտով մամուլի տակ կը մտնեն իմ թարգմանած հետևեալ ՁՈՐՍ *գրքոյկները։*

I. „ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ“ *հեղ.* ԼՈՒԻԶԱ ԲԻԻԹՆԷՐԻ.

II. „ՈՍԿԷ ԲՋԷՋ“ (*ժողովրդական վէպ ամերիկական կեանքից*) *հեղ.* ԷԴԳԱՐ ՊՕ.

III. „ԻՆՉՊԷՍ ԿՈՊԷԿԸ ՄԻԼԻՕՆ ԴԱՐՁԱՒ“ (*մանկ. վէպ անգլիական կեանքից*) *հեղ.* ՏԻԿԻՆ ԲԱՌԻԷՆԻ.

IV. „ԱՆԴԱՄԱԼՈՑԾ“ (*մանկ. վէպ դանիական կեանքից*) *հեղ.* ԱՆԴԵՐՍԷՆԻ։

ՁՈՐՍ *գրքոյկի բաժանորդագինն է* 1 *բուբլի։—Գրքոյկները հեռագիտաև լոյս կը տեսնեն մինչև առաջիկայ Սեպտեմբերի վերջը։ Ուստի խնդարհաբար խնդրում եմ այն յարգելի տիկնանց և պարոններին, որոնք բաժանորդներ դառնալու նեղութիւնը յանձն էին արել, փութան ուղարկելու մեզ բաժանորդագրութիւնը և գրամը, որպէս զի առանց յետաձգելու, ճշտութեամբ կարողանայինք որոշել տպագրվելի օրինակների քանակութիւնը։—Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով։* Тифлисъ, Григорію Шахъ-Будагянцу, Абасъ-Абатская площадь, д. № 8.

Գրիգոր Շահբուդաղեանց

2—5

ՆՈՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ Է *մեծ քանակութեամբ, եւ ծախվում է աւելի էժան քան թէ ուրիշ տեղեր, ամենայն տեսակ վէնայի մէբել յայտնի* ՏՕՆԷՏԻ *գործարանից։ — Ֆրանսիական և* ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿԱԹԷ ԿՐԱՒԱՏՆԵՐ 8—30 *ր.։ Զամբաններ* 2—50—25 *ր.։ Սակվոյեաժներ* 1-30—12 *ր.։—Ճանապարհի սունդուկներ* 5—25 *ր.։ Մառաններ* (Погребцы) 6—25 *ր.։* 600 *հատից աւելի* ՍԱՄՈՎԱՐՆԵՐ 60 *կ.—*1 *ր.* 20 *կ. ֆունտը։—Կուլսօնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ։—*ՈՒՄԻՎԱԼՆԻԿՆԵՐ ՄՐԱՄՕՐՆԻ 38—75 *բուբլի։—Հրացաններ երկու լուլանի* 6—32 *բուբլի։* ՐԵՎՕԼՎԵՐՆԵՐ *ամեն տեսակ.* 3.25—30 *ր.։—Պատրօններ ըեվոլվերի, Սիգարայ Ռէնգարդի ֆաբրիկայից։* 5000 *ֆունտից աւելի թէյ* (чай) ԵՂԲ. ՊՈՊՈՎՆԵՐԻ։—*Պետերբուրգի Միխելսօնի կոֆէ* 40—1 *ր.* 25 *կ.* ՀԱՑՆԼԻՆԵՐ *ամեն տեսակ* 3.40—50 *ր.։ Գինեվաճառների, գարեջրի և հանքային ջրերի* (для зельтерскихъ водъ и пива) *համար պրոբկայ։ Սամովարի և էյի համար պադնոսներ։ Դանակ չանգալներ գանազան ֆաբրիկաների* 1.20—15 *ր. դուժինը։—Ղայթուկ* (Пухъ) *Գրչակոթեր—*60—4.50 *կ. կրոցը։ Դանակներ ջէբի Դանակներ հացի.* 25—1 *ր. հատը։ Կուլսօնի* 1.40—3.20 *կ. Պրիբորը։ Միս կոտորելու մաշինայ։ Շվէյցարիայի ուլթուներ։ Բրիտանական էյնիկներ։ Կաֆէ ռնիկներ։ Ամեն տեսակ։ Կոֆէ աղալու մաշինաներ Ֆրանսիայից։ Փոշտի թղթեր։ Կոնվերտներ։ Սուրգուչներ։ Մատիտներ։ Երկաթէ գրիչներ։ Սաղա և տողած քարէտախտակներ։ Գարեգրիչներ։ Պրէս-Պապիէներ։ Գդալներ սեղանի և էյի գործածութեան* ՖՐԱԺԷՆ, *վարշավայի և բրիտանական։ Սեղանինը* 1.25—12 *ր.։ Իսկ էյինը* 45 *կօպէկից—*5 *ր. դուժինը։—Զամբաններ ամեն տեսակ* 75 *կ.—*12 *ր.։ Մարդկանց շապիկներ։ Գալստուկներ։ Զօնտիկներ երկու սեռի.* 35—6.50 *հատը։ Գուտապերչից, Ոսկորից, և Շերմահի սանդրներ։ Գլխի, շորի, Սապոնի և կարտի չոտկաներ։ Հաշի շչոտկաներ։ Թել Մատոկի, կոճի և բրդէ* (гарусъ)։ *Ծխախոտի, և քթախոտի ամաններ ամեն տեսակ։ Սապոններ հոտաւէտ ամեն գործարանների* 3—30 *կ. կտորը։ Հոտաւէտ ջրեր Բալլէի և ամեն տեսակ Գալանտերէյնի. ապրանքներ մշտական գտանվում են այժմ և շարունակ ստացվում են ուղղակի առաջին ձեռքից։ Ռուսաստանի և Արտասահմանի գլխաւոր* ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԻԲԱՑԼԻ, ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՑԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ (въ складѣ) *Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւն №* 13.

Գումարով գնող վաճառականներին ծախվում է առանձին պայմաններով և զիջումով։

Օտարաքաղաքացիք կարողեն դիմել հետևեալ հասցէով։ Въ Тифлисъ. МИХАИЛУ И. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

(2.—1)

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այս գինին շատ համեղ է և 25 *տարիների ընթացքում աջողութեամբ գործ է դրվում։ Հետևեալ դէպքերում։* ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՔՍԻ ՅԱՒԵՐ, *և* ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ։

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել է առաջին մեդալներ հետևեալ աշխարհանդէսներին՝ ՓԱՐԻԶԻ 1867 *թ.,* ՎԻԵՆՆԱՅԻ 1873 *թ.* ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 *թ.* ՓԱՐԻԶԻ 1878 *թ.։*

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Կովկասի համար պահեստ. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ։

29—80 (*Ե. շ.*)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ *ամեն տեսակ վաճառականների համար և մատչելի ձեռնարկ իւրաքանչիւրի համար, որ կամենում է ուսումնասիրել առևտրական դրութիւնները ու հաշուարարութիւնները։*

„ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ“

Վաճառվում է՝ կենդրօնական գրավաճառանոցում, պ. Շահվերդեանի պավիլիօնում, պ. Եփրեմ Ծատուրեանցի լամպային մագազինում, պ. Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում և եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում։

Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով. Въ Тифлисъ, Сололакская улица, домъ Корганова, Учредителю „Коммерческихъ курсовъ„ Степану Мануэльянцу. *Գինն է* 2 *բուբլի, (սակաւաթիւ տպված)։ Նոյն տեղից կարելի է ստանալ ձրիապէս Առևտրական կուրսերի ծրագիրը և կանոնները։*

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Іюня 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. каз.